




ՈԱ-7957

### ՎԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՍԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐԵՎԱՆՑՈՒ ԱՆՁԻ ԵՎ ՄԵԾ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ



ա (Ոսկանն) ևս հրամանաւ Տեառն Յակօրու և գրով նորին յարուցեալ ի սրբոյ էջմիածնէն բազմաւ վշտիւ եկեալ էհաս ի զործարանն՝ յորում տպիր շարակնոցն հրամանաւ նորին և ժամանեալ էր մինչև ի համբարձան ձեռամբ կարապետի Վարդապետի աշակերտի սորին: Իսկ ինքն իբրև էհաս ի գործարանն ձեռնարկեաց զնօտրու գիրն շինել ի պէտս խորագրի Աստուածաշնչոյն:

Իբրև աւարտեցաւ Շարակնոցն՝ ձեռնարկեաց զԱստուածաշունչն: Բայց Աստուածաշունչոյն զբազումս շարագրեաց պակասորդս, և կարդաւորեաց ըստ լատինացւոցն, գլխատեաց և տնտեաց՝ որպէս տեսանելի է ներտպեցելոց Աստուածաշնչոցն: Նաև զհամաձայնութիւնս բովանդակից Աստուածաշնչոցն առագրեաց. արտագրեալ ի լատինացւոցն առ մերս որպէս մեզ գոյ միայն Աւետարանացն: Նաև վերստին թարգմանեաց լիակատար զբան Յեսուայ որդոյ Սիրաբայ: Քանզի մեղ թէպէտ գոյն՝ այլ ոչ լիակատար այլ ծայրաբաղ և համառօտ: Նաև ոչ ներամենից աստուածաշնչոց գոյր, այլ ոմանց ոմանց: Այլև թարգմանեաց զշորորդ գիրս Նզրասայ՝ որ և սա յաւէտ նուազ երևի ի մէջ մեր. իսկ

ի մէջ աստուածաշնչոց ամենևին ոչ: Նաև զցանգս լատինացւոց աստուածաշնչոյն թարգմանեաց՝ որով ընթերցողն դիւրաւ դտանէ ի մէջ գրոց պիսղրելիսն իւր՝ որոյ և կարօտանայ:

Նաև տպեաց զգիրս յուրվս զայբուբենից տրակսն. զոր ինքն էր արտագրեալ ի Դաղմատացւոցն. նաև զԱզօթամատոյցս. և Պարպատօմարս հանդերձ Տօմարիւ. և զԱշխարհացոյցս զարարեալ ի մեծէն Մօսիսէ խորենացւոյ. ընդ որոյ և զԱզուէս դիրքն շահաւէտ: Նաև զպատմագիրս նոր՝ զարարեալն յԱռաքելոյ Վարդապետէ, զորս ոչ միայն տպագրեաց, այլև սրբագրեալ ուղղեաց ըստ քրականութեան արհեստի. զաւաղեալն ի գրչաց անհմտաց. և անոպայից արանց և բանաստեղծից, ի փառս սրբոյ Նրորդութեանն:

Բայց զնեղութիւնս կրեաց և կրէ ի սուտակասպասից և ի բարձրայօնից իմաստակաց, յեկեղեցականաց և յաշխարհականաց, մերձակայից և հեռաւորաց: Իսկ նա զարարանսն յանձին տարեալ ասէր. եթէ տակաւին մարդկան հաճոյ լինիմ, ապա Քրիստոսի ծառայ ոչ եմ:

ՈՍԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

(Առաքել վրդ. Դավրիժեցի՝ «Պատմութիւն», «Պատմութիւն կենաց Ոսկանայ վարդապետի Երևանցոյ», 1669 թ., Ամստերդամ, էջ 629—645):



Տպագրութեան ձեռնարկին կատարելագոյն նահատակ մը եղավ տպարանի փոշիներուն մեջ թավալող այդ սրբազան արքեպիսկոպոսը, մինչ շատ դուրին էր իրեն, յուր ծագումով և աստիճանով՝ փառքերու և հեշտութիւններու մեջ անցնել յուր կյանքը, յուր դասակից եկեղեցականներուն նման: Ոսկանի անձնավորութիւնը արժանի է մեր ազգին մտավոր զարգացման տեսակետէն՝ մեծ երախտավորներու կարգը դասվիլ, և Հայ տպագրութեան իսկապես մղում տվողը ճանչցվիլ:

**ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆՅԱՆ**

(Օրմանյան՝ «Ազգապատմ», Կոստանդնուպոլիս, 1914 թ., հատոր Բ, էջ 2544):



Հակոբ Զուղայեցի կաթողիկոսն էր, որ գահ բարձրանալուն պես (1655 թ.) առանձին հոգացողութեան առարկա դարձրեց և հայկական տպագրութիւնը: Հետևյալ տարին ևեթ այդ ժիր և գործունյա հովվապետն Եվրոպա է ուղարկում դպիր Մատթեոս Մարեցուն, որ Փիլիպպոս կաթողիկոսի քարտուղարն ու սպասավորն էր: Մարեցին էլ, ինչպես նրանից առաջ գնացողները, իր քայլերն ուղղեց նախ դեպի Վենետիկ. բայց այստեղ հարմարութիւններ չգտնելով, ստիպված եղավ անդործ մնալ 14 ամիս, որովհետև կամենում էր Հովհաննես Զուղայեցու նման բախտ փորձել Հռոմում, իսկ այնտեղ համաճարակ հիվանդութիւն կար և բոլոր ճանապարհները փակված էին: Հիվանդութիւնն էլ վերացավ, ճանապարհներն էլ բացվեցին, բայց Հռոմը մնաց Հռոմ, և Մարեցին իզուր էր այնտեղից օգնութիւն սպասում: Արդեն Վենետիկից սկսվել էին այն արգելքները, որոնք հանուն «Ճշմարիտ և ուղղադավան» քրիստոնեութեան պատրաստ էին հալածելու լուսի և գիտութեան ետևից ման եկող «հերետիկոսներին»: Հակոբ Կաթողիկոսը 1662 թվին Ոսկանին ուղարկեց Եվրոպա: Ոսկանը պատրաստ ուներ մի ամբողջ հրատարակչական ծրագիր: Ամենից շատ նրան հափշտակել էր Աստվածաշունչը տպագրելու միտքը: Մի երկու մանր գործեր կատարելուց հետո նա ձեռնարկում է Աստվածաշնչի տպագրութիւնը, — մի արդարև մեծ գործ, որ, ինչպես տեսանք, վաղուց ի վեր պահանջ էր դարձել ազգի մեջ և շատերի տենչանքն էր, բայց մնացել էր երազ: Կարիք չկա այստեղ մի առ մի բացատրելու, թե ինչ դժվարութիւններ էր

ներկայացնում առաջին անգամ Աստվածաշունչ տպագրելու: Ոսկանը երկար ժամանակ աշխատանք էր թափել նրա վրա ոչ միայն իբրև տպագրող, այլև իբրև խմբագրող: Նա համեմատել է հայերեն Աստվածաշունչը լատիններենի հետ, տնտեսել է լատիններենի համաձայն, կազմել է բոլոր հատուկ անունների մի շատ մանրամասն ցանկ, նույնիսկ նրա մի մասը (Սիրաքի գիրքը) նորից թարգմանել տվել Ստեփանոս Լեհացուն: Գրքի վերջում Ոսկանը զետեղեց մի քանի կտոր թարգմանութիւններ ս. Հերոնիմոսից, որոնք, երևի, իր գործն էին: Ավելացրեք այդ բոլորի վրա անսխալ, պատկերազարդ, մաքուր և գեղեցիկ տպագրութիւնը, և դուք հասկացողութիւն կկազմեք Ոսկանի գործադրած մեծ ջանքերի և հոգեկան մեծ կարողութեան մասին: Տպագրական մամուլն առաջին անգամն էր լույս հանում այն փաստը, որ հայն էլ ընդունակ է երկար ու դժժան աշխատութիւններով խոշոր հրատարակութիւններ անել: Պակասութիւնը միայն այն էր, որ Ոսկանը չկարողացավ իր լատինարանութիւններից և անհարազատ ձևերից ազատել իր թարգմանութիւններն ու բացատրութիւնները: Սիրաքի նոր թարգմանած գիրքն էլ կրում էր լատինամոլների բոլոր նորմուծութիւնները: Հայերեն Աստվածաշունչը տպագրվեց երկու տարվա ընթացքում: Նա մտավ մամուլի տակ 1666 թվին և դուրս եկավ 1668 թվին: Նկատի առնելով այն ժամանակվա տպագրական գործի դրութիւնը, և մանավանդ այն հանգամանքները, որոնց մեջ գործում էր Ոսկանը օտար հողի վրա, մենք չենք կարող չզարմանալ այդ արագութեան վրա:

Ամստերդամում Ոսկանը մնաց չորս տարի, մինչև 1670 թվականը, և այդ ժամանակամիջոցում տպագրեց 17 գիրք, միջին թվով տարին 4 գիրք, որ մի աննախընթաց երկվույթ էր:

ԼԵՈ

(Լեո՝ «Հայոց պատմութիւն», 1946 թ., Երևան, հատոր Գ, էջ 442—451):



Սա մի հոյակապ գործ է տպագրական-տեխնիկական տեսակետից և աննախընթաց աշխատանք մինչև իր ժամանակի հայերեն հրատարակութիւնները:

Շարված է ցիցերո, 8×12-ի վրա, բոլորգիր տառերով, երկսյուն 4—4 քառակուսու վրա, լուսանցքի հետ միասին գիրքն ունի 21×26 սմ ֆորմատ և 11 սմ հաստութիւն (կազմով):

Տեքստի բուն շարվածքից դուրս, էջերի աջ և ձախ կողմերում մի քառակուսու լայնու-



թյամբ ունի նոտրագիր ծանոթություններ, այսպիսով էջերը կապված են 10 քառակուսու լայնություններով: Յուրաքանչյուր էջի ճակատին կա բոլորգիր վերտառություն 16 պունկտի հասարակ տառերով: Գլուխները՝ նույն տառերի գլխագրերով և թռչնագիր սկզբնատառերով: էջերը համարակալված են ներսի կողմից հայատառ և դրսի կողմից արաբական թվանշաններով: Մեզ անհասկանալի պատճառով համարակալությունը կրկնվում է երկու անգամ. սկզբից մինչև գրքի համարյա կեսը (Մակարայեցոց Բ. գրքի վերջը) առաջին թվարկումն է առիթը կամ 1—628, ապա Հորի գրքից մինչև վերջը ապալը, կամ 1—836, այսպիսով՝ ամբողջ գիրքը բռնում է 1464 էջ (2928 սյունակ): Գրքի տպագրությունը կատարված է միջին հաստության սպիտակ-կաթնավուն վերժեթ թղթի վրա, քառածալ, այսինքն տպագրված է 4—4 երես, այսպիսով՝ 183 թերթի վրա, մամուլի տակ մտնելով 366 անգամ (նկ. 21, 22):

Գրքի մեջ կան փայտի-փորագրի պատկերներ՝ 3×13 սմ միջին մեծությամբ, թվով 158, որոնցից Հին Կտակարանում՝ 51, Նոր Կտակարանում՝ 107, կլիշեններից շատերի վրա երևում է փորագրչի ստորագրությունը՝ C. S. Ոսկանի այս հրատարակության մասն խոսող բանասերներից ոմանք գրում են, թե ինչպես տառերը, այնպես էլ այս պատկերները նա պատվիրել է հուլանդացի արվեստագետներին հատկապես իր հրատարակության համար: Պատկերների մասին մենք այն կարծիքին ենք, որ Ոսկանն օգտվել է իր ժամանակ Ամստերդամում տպագրվող բազմաթիվ Աստվածաշունչներից մեկի կամ մի երկուսի պատրաստի կլիշեններից, որովհետև այդ քանակությամբ նոր պատկերներ փորագրելու (և ինչ օրիգինալներից) համար պետք կլիներ մի քանի տարի, ապա Ոսկանի գրքի նկարներից երևում է, որ նրանք պատրաստված են եղել ավելի մեծադիր Աստվածաշունչի համար և հայերենի մեջ իրենց լայնությունները մեկ կամ երկու և ավելի սմ-ի չափով դուրս են ցցված տեքստից: Պատկերները Ոսկանի գրքի մեջ դասավորված են մեծ մասամբ գլուխների սկզբում 2-ական հատ կողք-կողքի, ապա տեքստի մեջ (առավելապես Նոր Կտակարանում) մի-մի հատ՝ սյունակների մեջ: Պատկերներ չունեցող գլուխ-

ներն ունեն եվրոպական ոճի տպարանական գլխագրեր, որոնք երբեմն կրկնվում են:

Գրքի անվանաթերթը (տիտուլ) բավական լայն շրջանակ ունի, կազմված չորս փայտափորագրի կտորներից, աջ և ձախ զարդանկարների մեջ հավատ և հույս սիմբոլները ներկայացնող մարդկային կերպարաններ: Աստուածաշունչ բառը թռչնագրերով, ապա երկու տեսակ գլխագրեր և երկու տեսակ բոլորգիր: Անվանաթերթի Բ. երեսում՝ «Համարողական արուեստ ընդ Հայոց համեմատեալ» վերնագրի տակ առաջ են բերված արաբական թվանշանները, որոնց դիմաց համապատասխան թիվ ունեցող հայ այբուբենի տառերը՝ 1—100,000—Ա ՃԻ: Երրորդ էջում Ոսկանի բացատրական առաջաբանն է, կողմնակից Հակոբ կաթողիկոսին՝ Աստվածաշնչի խմբագրական և տպագրական աշխատանքների կարճառոտ ծանոթությամբ սկսվում է այսպես՝

Բանահիսուսին առ  
վհագոյն Հայրապետն Հայոց տէր  
Յակօբ, ի նուաստէ ումեմնէ բանի  
սպասաւորէ ոսկան վարդապետէ  
Յաղագս տպագրութեան  
տառից աստուա-  
ծայնոց.

Գրքի վերջում, ցանկից հետո, գրված է Հեթում Բ հայոց թագավորի մի ոտանավորը... որի մեջ թագավոր բանաստեղծն իր մասին ունի այսպիսի տողեր.

Հեթում անուամբ լուկ թագաւոր  
Ներքո աղքատ և պարտաւոր,  
Քանդի կոչիմ իշխան հայոց  
Բայց ես իշխեմ ախտից իմոց...

Ամենից վերջը, «Առ ընթերցողսդ» վերնագրի տակ, Ոսկան Նրևանցին գրել է մի քանի էջ բռնող իր հիշատակարանը:

Աստվածաշնչի տպագրությունը տևում է 2 տարի, նա ունի ամուր, հաստատուն կազմ՝ կարմիր կաշեպատ հաստ տախտակից. բացվածքի երեք կողմում՝ ոսկեգույն փայլ և խաղավոր ծաղկանկարներ:

**Գ. ԼԵՎՈՆՅԱՆ**

(Գարեգին Լևոնյան՝ «Հայ գիրքը և տպագրության արվեստը», Նրևան, 1946 թ., «Առաջին հայերեն Աստվածաշնչի տպագրությունը» էջ 105—109):

